


ՀԱՅԿԱԿԱՆ ՍՈՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ  
ՍՈՎԵՏԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԿԱДЕՎՈՐ ԳԻՏՆԱԿԱՆՆԵՐԸ

№ 13

ԱՐԱՐԱՏ ՍԱՀԱԿԻ  
ՂԱՐԻԲՅԱՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՈՀ ԳԱ ՀՐԱՏԱՐԱԿՑՈՒԹՅՈՒՆ  
ԵՐԵՎԱՆ

1971





АКАДЕМИЯ НАУК АРМЯНСКОЙ ССР  
ВЫДАЮЩИЕСЯ УЧЕНЫЕ СОВЕТСКОЙ АРМЕНИИ  
№ 13

АРАРАТ СААКОВИЧ  
ГАРИБЯН

Вступительная статья А. А. АБРААМЯНА  
Библиография составлена Р. А. БАБАДЖАНЯН

ИЗДАТЕЛЬСТВО АН АРМЯНСКОЙ ССР  
ЕРЕВАН 1971

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՈՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ  
ԱՊՎԵՏԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԿԱДЕՎՈՐ ԳԻՏՆԱԿԱՆՆԵՐԸ  
№ 13

# ԱՐԱՐԱՏ ՍԱՀԱԿԻ ՂԱՐԻԲՅԱՆ

Խերաժականը Ա. Ա. ԱՐՐԱՀԱՄՅԱՆԻ  
Մատենագիտուրյունը Կազմել է Ռ. Ա. ԹԱԹԱԳՅԱՆՅԱԾ


ՀԱՅԿԱԿԱՆ ՍՈՀ ԳԱ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ  
ԵՐԵՎԱՆ


1971

016:4  
—  
Б-13

Պատասխանատու խմբագիր՝  
Ա. Ա. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

6-10-5





ԱԿԱԴԵՄԻԿՈՍ Ա. Ա. ՂԱՐԻԲՅԱՆԻ ԿՅԱՆՔԻ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ  
ՀԻՄՆԱԿԱՆ ՏԱՐԵԹՎԵՐԸ

Արարատ Սահակի Ղարիբյանը ծնվել է 1899 թ. հունվարի 27-ին  
Արտաշատի շրջանի Այգեղարդ (Դարդալու) գյուղում:

1915 թ. ավարտել է Երևանի պրոգիմնազիան:

1919 թ. ավարտել է Երևանի արական դիմնազիան:

1927 թ. ավարտել է Երևանի պետական համալսարանի բանասիրական ֆակուլտետը:

1922—1928 թթ. աշխատել է Երևանի յոթնամյա և Արովյանի անվան երկրորդ աստիճանի դպրոցներում որպես ուսուցիչ:

1928 թ. ընդունվել է Երևանի պետական համալսարանի ասպիրանտուրան:

1929—1948 թթ. դասախոսել է Երևանի պետական համալսարանում:

1934 թ. մինչև օրս դասախոսում է Երևանի Խ. Արովյանի անվան հայկական մանկավարժական ին-տում:

1934—1937 թթ. դասախոսել է Թբիլիսիի հեռակա մանկավարժական ին-տի հայկական բաժնում:

1935—1947 թթ. դասախոսել է Բաքվի Լենինի անվան մանկավարժական ին-տի հայկական բաժնում:

1934—1954 թթ. դասախոսել է հայկական հեռակա մանկավարժական ին-տում:

1934—1956 թթ. դասախոսել է Երևանի ուսական մանկավարժական ին-տում:

1934—1960 թթ. եղել է Երևանի Խ. Արովյանի անվան հայկական մանկավարժական ին-տի հայոց լեզվի ամբիոնի վարիչ:

- 1936—1948 թթ. դասախոսել է Հենինականի Նալբանդյանի անվան մանկավարժական ին-տում:
- 1937 թ. առաջինը Հայաստանում ստացել է բանասիրական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան:
- 1940 թ. նույնպես առաջինը Հայաստանում ստացել է բանասիրական գիտությունների դոկտորի գիտական աստիճան:
- 1940 թ. ստացել է պրոֆեսորի գիտական կոչում:
- 1944—1950 և 1956—1962 թթ. եղել է Հայկական ՍՍՀ գիտ. ակադ. լեզվի ին-տի դիրեկտոր:
- 1947 թ. ընտրվել է Հայկական ՍՍՀ գիտ. ակադ. թղթակից-անդամ:
- 1954 թ. ստացել է գիտության վաստակավոր դորժի պատվավոր կոչում:
- 1955—1967 թթ. ղեկավարել է Հայկական ՍՍՀ գիտ. ակադ. լեզվի, գրականության և արվեստի ինստիտուտների գիտական աստիճաններ շնորհող միացյալ գիտական խորհուրդը:
- 1958—1961 թթ. և 1964 թ. մինչեւ օրս Հայկական ՍՍՀ գիտ. ակադ. հասարակական բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղարի տնօւակալ հասարակական կարգով:
- 1960 թ. ընտրվել է Հայկական ՍՍՀ գիտ. ակադ. իսկական անդամ:
- 1962 թ. մինչեւ օրս Հայկական ՍՍՀ գիտ. ակադ. գրադարանային խորհրդի նախագահ՝ և ֆունդամենտալ գրադարանի գիրեկտոր:
- 1969 թ. պարգևատրվել է Աշխատանքային կարմիր դրոշի շքանշանով:

ԿՅԱՆՔԻ, ԳԻՏԱԿԱՆ ԵՎ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ  
ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՌՈՏ ԱԿՆԱՐԿ

Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի ակադեմիկոս, գիտության վաստակավոր գործիչ, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Արարատ Սահակի Ղարիբյանը ծնվել է 1899 թ. Հունվարի 27-ին Արտաշատի շրջանի Այգեղարդ (Դարդալու) գյուղում, հողագործի ընտանիքում:

1908 թվականից սովորել է ռուսական 5-դասյան դպրոցում, իսկ 1911 թվականից՝ Երևանի պրոգիմնասիայում։ 1915 թվականին պրոգիմնազիան ավարտելուց հետո ընդունվել է Երևանի արական գիմնազիայի 5-րդ դասարանը։ Գիմնազիան ավարտել է 1919 թվականին։ 1923 թվականին ընդունվել է Երևանի պետական համալսարանի բանասիրական ֆակուլտետը, որն ավարտել է 1927 թվականին։

1922—1928 թվականներին աշխատել է Երևանի յոթնամյա և երկրորդ աստիճանի դպրոցներում որպես ուսուցիչ։

1928 թվականին ընդունվել է համալսարանի ասպիրանտուրան՝ հայոց լեզվի պատմության մասնագի-

տության գծով՝ աշակերտելով մեծ հայագետ Հ. Աճառյանին:

Այնուհետև սկսվում է Ա. Ղարիբյանի լայն ու բեղմ-նավոր գործունեությունը, որը հիմնականում ընթանում է երեք ուղղությամբ՝ գիտա-մանկավարժական, գիտա-կազմակերպչական և գիտահետազոտական:

1929 թվականից սկսել է գասախոսական աշխատանքը պետական համալսարանում: 1934 թվականից դասախոսել է հայկական մանկավարժական ինստիտուտում, ապա և հեռակա, ուսուական մանկավարժական ինստիտուտներում: Դասախոսական աշխատանքի է հրավիրվել նաև Լենինականի, Բաքվի, Թբիլիսիի բարձրագույն դպրոցները: Երևանի պետական համալսարանում նրա աշխատանքը շարունակվել է մինչև 1948 թվականը, ուսուական մանկավարժական ինստիտուտում՝ մինչև 1956, հեռակայում՝ մինչև 1954 թվականը, իսկ Խ. Արովյանի անվան մանկավարժական ինստիտուտում՝ շարունակում է աշխատել մինչև օրս: Դասավանդել է հայերենագիտության տարբեր բնագավառներին վերաբերող մի շարք առարկաներ՝ հայոց լեզվի պատմություն, հայ բարբառագիտություն, հայերենի պատմական քերականություն, ինչպես նաև հայոց լեզվի գասավանդման մեթոդիկա:

1934 թվականին կազմակերպել է հայկական մանկավարժական ինստիտուտի հայոց լեզվի ամբիոնը, որն անընդմեջ ղեկավարել է մինչև 1960 թվականը:

Ա. Ղարիբյանը 1937 թվականին պաշտպանել է

թեկնածուական դիսերտացիա՝ «Հայերենի հոգնակի նշանակող մասնիկները և նրանց լեզվաբանական նշանակությունը» թեմայով և ստացել բանասիրական գիտությունների թեկնածուի աստիճան՝ այդ գծով առաջինը լինելով Հայաստանում։ Մի քանի տարի անց՝ 1940 թվականին, պաշտպանում է դոկտորական դիսերտացիա՝ «Հայերենի «ս» ճյուղի բարբառները» (նույնպես առաջինը հանրապետությունում)։ Շուտով նրան շնորհվում է պրոֆեսորի գիտական կոչում։

Ա. Ղարիբյանը մեծ ջանքեր է գործադրում Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի համակարգում լեզվի ինստիտուտ կազմակերպելու ուղղությամբ։ 1944 թվականին լեզվի և գրականության ինստիտուտի լեզվի բաժնի բազայի վրա հիմնվում է ինստիտուտը, որի առաջին դիրեկտորը դառնում է Ա. Ղարիբյանը։ Այսուհեղ նա պաշտոնավարում է մինչև 1950 թվականը, ապա նույն պաշտոնով աշխատում է 1956—1962 թվականներին։

1947 թվականին Ա. Ղարիբյանն ընտրվում է Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի թղթակիցանդամ, 1960 թվականին՝ իսկական անդամ, 1954 թվականին նրան շնորհվում է Հայկական ՍՍՀ գիտության վաստակավոր գործչի պատվավոր կոչում։ Մի շարք տարիներ նա հասարակական կարգով աշխատել է որպես ակադեմիայի հասարակական բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղարի տեղակալ։ 12 տարի ղեկավարել է լեզվի, գրականության և արվեստի գիտական աստի-

ճաններ շնորհող միացյալ խորհուրդը։ Այժմ գլխավորում է ակադեմիայի նախագահությանը կից գրադարանային խորհուրդը, ինչպես և գրադարանային ցանցը։

Այս բոլոր բնագավառներում էլ Ա. Ղարիբյանը ներդրել է իր անսպառ եռանդը և ստեղծել հարուստ ու գնահատելի վաստակ։ Հաղարավոր երիտասարդներ են լսել նրա դասախսությունները, ձեռք բերել գիտելիքների համապատասխան պաշար ու նվիրվել ժողովրդական կրթության շնորհակալ գործին։ Նրա ղեկավարությամբ մի քանի տասնյակ ասպիրանտներ հաջողությամբ պաշտպանել են թեկնածուական դիսերտացիաներ, իսկ նրանցից մի քանիսն արդեն գիտության դոկտորներ են։ Նրանք հաջողությամբ աշխատում են հանրապետության բարձրագույն դպրոցներում ու գիտահետազտական հաստատություններում։

Ա. Ղարիբյանը գիտական շատ ձեռնարկումների կազմակերպիչ է։ Նրա եռանդագին ջանքերով Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտում սկսվեցին ու իրագործվեցին հայ նոր գրականության դասական և ժամանակակից ներկայացուցիչների լավագույն երկերի քարտագրման աշխատանքները՝ ժամանակակից հայ գրական լեզվի բառապաշարն ուսումնասիրելու և միջին ու ակադեմիական բացատրական բառարաններ ստեղծելու նպատակով։ Բավականաշափ հարուստ քարտարանի հիման վրա կազմվեց ժամանակակից հայերենի բացատրական բառահատոր բառարանը, սկսվեց և հաջողու-

թյամբ գլուխ բերվեց ոռւս-հայերեն քառահատոր մեծ  
րառարանի աշխատանքը, հրատարակվեցին գիտական  
աշխատությունների ժողովածուներ, մենագրություններ  
և այլն: Նրա տեսադաշտից դուրս չմնաց նաև հին հա-  
յերենը: Գրաբարի բառապաշտրի ու քերականական  
կառուցվածքի ուսումնասիրության նկատառումը  
Ա. Ղարիբյանը նախաձեռնեց հայ հին մատենագրու-  
թյան հիմնական նմուշների քարտագրումը և մշակու-  
մը: Այդ կարևոր աշխատանքը, որ սկսվել էր Հ. Աճառ-  
յանի անվան լեզվի ինստիտուտում, այժմ շարունակ-  
վում է ակադեմիայի գրադարանին կից քարտարանում,  
որի հիմնադիրն ու գիտական ղեկավարը նույնպես  
Ա. Ղարիբյանն է:

Լայն են հայագետ-լեզվաբան Ա. Ղարիբյանի գի-  
տական հետաքրքրությունների սահմանները, որոնք  
ընդգրկում են հայերենի բարբառները, հայոց լեզվի  
պատմությունը, պատմական քերականությունը, գրա-  
բարը, ժամանակակից հայերենը և այլն:

Առանձնապես նշանակալից է Ա. Ղարիբյանի հե-  
տագոտական աշխատանքը հայ բարբառների բնութա-  
գրման, նրանց կառուցվածքային իրողությունների  
վերհանման, տեսական լուսաբանման, գիտական արժե-  
քավորման ու ընդհանրացումների ուղղությամբ: Ա. Ղա-  
րիբյանը մի կողմից նկարագրել ու գիտության համար  
հայտնի է դարձրել բարբառները, իսկ մյուս կողմից  
բննել բարբառագիտության հետ անմիջապես կապ ունե-

ցող տեսական կարևոր հարցեր: Հայտնաբերել ու նկարագրել է 15 բարբառ, 6 ենթաբարբառ էլ առաջարկել է ճանաշել որպես ինքնուրույն բարբառներ: Բարբառագիտության բնագավառում նրա առաջ քաշած ու մշակած հիմնական դրույթների առանցքն են կազմում հայ բարբառների գիտական դասակարգման, բարբառային կարևոր փաստերը մի կողմից հայոց լեզվի պատմության, մյուս կողմից պատմահամեմատական լեզվաբանության որոշ կնճռոտ հարցերի լուսաբանմանը ծառայեցնելու խնդիրները: Իր հավաքած և հետազոտած բարբառային հարուստ ու արժեքավոր նյութի հիման վրա նա գիտականորեն ու համոզկերությամբ ապացուցել է բարբառների մի քանի ինքնուրույն ճյուղերի («ս», «կա», «հա» և այլն) գոյությունը: Առաջարկել է հայ բարբառների հնչյունական դասակարգումը: Նախ լրացրել և ապա վերանայել է ձևաբանական դասակարգումը՝ ընդունելով դերբայավոր, մասնիկավոր և գրաբարատիպ խմբեր՝ առաջին երկուսը համապատասխան ճյուղերով (նման դասակարգում որոշ տարբերություններով բոլորովին անկախ կատարել է նաև պրոֆ. է. Աղայանը):

Ա. Ղարիբյանի գրշին են պատկանում բարբառագիտական բազմաթիվ աշխատություններ՝ մենագրություններ, ձեռնարկներ, հոդվածներ և այլն:

1939 թվականին հրատարակվեց Ա. Ղարիբյանի «Հայերեն բարբառների մի նոր ճյուղ» ուսումնասիրու-

թյունը, որով հեղինակը գիտականորեն հաստատում էր բարբառների «ս» ճյուղի գոյությունը։ Այսպիսով, մինչ այդ, ըստ Հ. Անառյանի կատարած դասակարգման զիտության մեջ ճանաշված երեք ճյուղերի վրա («ում», «կը», «էլ» (էս) ավելացավ շորորդ ճյուղը։ Դա տարիների հետազոտական աշխատանքի արդյունքն էր, որն ինքնին մի կողմից գալիս էր ընդգծելու գիտությանը մի քանի տասնամյակ հայտնի ձևաբանական դասակարգման հիմունքների ճշտությունը, իսկ մյուս կողմից ընդլայնում էր հայ բարբառագիտական այնքան անհրաժեշտ գրականությունը։ Աշխատության ներածական մասում հեղինակը ընդհանուր գծերով ներկայացնում է հայ բարբառների դասակարգման պատկերը, ապա անցնում բայի սահմանական հղանակի ներկա ժամանակի կազմությանը և հիմնական իմաստին։ Նա մատնացուց է անում անկատար դերբայով (տարրեր կազմություն ու ձևավորում ունեցող) և օժանդակ բայով կազմվող ներկա ժամանակի ամենասերտ կապը ներգոյական հոլովի հետ, նշում է, թե ինչպես հին հայերենի երթեմնի նախդրավոր արտահայտությունները, որ ներգոյականի հոլովական իմաստ էին արտահայտում, հետագայում նախդիրների կորուստով ու օժանդակ բայի հարազրումով հիմք են դարձել բայի ժամանակային ձևերի կազմության համար։ Այսպիսի ուղիով է ընթացել նաև ներկայացվող «ս» ճյուղի բարբառների համապատասխան ժամանակի կազմում հանդես եկող դերբայը, որը, սա-

կայն, նկարագրվող բոլոր բարբառների մեջ տառացիութեն նույն պատկերը շունի: Նրա մեջ տեղի են ունեցել որոշ ձևափոխություններ, բայց քանի որ պահպանվել է դերբայի երբեմնի ամբողջական մասնիկի և հնչյունը այդ բոլոր բարբառների մեջ (մասնակի բացառությամբ), ուստի դա հիմք է ընդունվում տվյալ ճյուղի ընդհանուր անվանման համար: Դերբայը ըստ բարբառների ներկայանում է հետեւյալ պատկերով՝ Արդվին—մընալիս, Շաղախ—մնայս, Կարճեան—մնայ (մնաս), Մեղրի—մնաս (էջ 29): Հեղինակը ճիշտ է նկատում, որ դերբայի լրիվ ու ավելի նախնական ձևը պահպանել է Արդվինի բարբառը (հետագա տարիների ուսումնասիրությունների շնորհիվ երեան են հանվում նաև համանման ուրիշ փաստեր): Ա. Ղարիբյանն այնուհետև մի քանի կետերով ցույց է տալիս մյուս բնորոշ կողմերը, որոնցով այդ ճյուղի բարբառները կառուցվածքային ընդհանություններ ունեն՝ կազմելով մի խումբ կամ ճյուղ: Միաժամանակ նշվում է, որ այդ ճյուղի բարբառները, շըփման մեջ լինելով այլ բարբառների հետ, ենթարկվել են նրանց աղդեցությանը: Այսպիս. Հադրութի և Շաղախի բարբառառներն ուժեղ շափով աղդվել են Ղարաբաղի բարբառից, Մեղրու և Կարճեանի բարբառները՝ Ագուիսի բարբառից, մասամբ նաև Ղարաբաղի բարբառից, Ուրմիայի բարբառը՝ Խոյի և Վանի բարբառներից, Արդվինի բարբառը՝ Թբիլիսիի, Կարնո և Քիշ շափով Տրապիկոնի բարբառներից (էջ 30): Սակայն, այդուհանդերձ, դրանք

շեն կորցրել իրենց դեմքը և պահպանվել են որպես ինք-նուրույն բարբառներ։ Այս տեսանկյունից էլ հեղինակն անցնում է իր ուսումնասիրության նյութ հանդիսացող բարբառների գիտական նկարագրությանը՝ առանձին-առանձին։ Յուրաքանչյուր բարբառի նկարագիրը տրվում է հնչյունական համակարգի, հոլովման ու խոնարհման առանձնահատկությունների հաշվառումով։ Բարբառի բնութագրումից հետո տրվում են բարբառային մի քանի նմուշներ։ Այդպիսով ընթերցողին հնարավորություն է ընձեռվում ամփոփ պատկերացում կազմելու համապատասխան բարբառների մասին։ Անշուշտ, հետաքրքրական են նաև բարբառային համադրական բառացանկերը (առանց Շաղախի բարբառի), որոնք բերված են գրարի բառացանկի հանդիպադրումով (էջ 152—187)։ Կարենոր են նույնպես հոլովման և խոնարհման համադրական աղյուսակները, որոնք կցված են աշխատությանը։ Այս բոլոր նյութերը՝ նմուշները, բառացանկերն ու աղյուսակները, գումարվելով նկարագրություններին, ընթերցողին համոզում են, որ հայերենում իրոք գոյություն ունի բարբառների մի այդպիսի ուրույն ճյուղ, որը պիտի արժանանա գիտական համընդհանուր ճանաշման։ Եվ արժանացավ։

Բարբառների ուսումնասիրության տեսակետից հետաքրքրություն ներկայացնող գործ է Ա. Ղարիբյանի «Հայերեն բարբառների դասակարգման խնդիրը» աշխատությունը։ Հեղինակը, անդրադառնալով բարբառնե-

րի դասակարգման խնդրին ու գնահատելով ձևաբանական սկզբունքը, միաժամանակ առաջարկում է բարբառները դասակարգել մի այլ՝ հնչունական սկզբունքով։ Դա հիմնավորում է նրանով, որ հաճախ ձևաբանորեն մի ճյուղի մեջ մտնող բարբառներն ունենում են հնչյունական կազմի զգալի տարրերություններ և, ընդհակառակն, ձևաբանորեն տարրեր ճյուղերի որոշ բարբառներ էլ երբեմն ունենում են հնչյունական կողմի ընդհանրություններ։ Այդպիսով բարբառների ճանաչման տեսակետից լրացման կարիք է զգացվում։ Հետեւաբար, ըստ հեղինակի, հնչյունական դասակարգումը պիտի դառնար բարբառների գիտական ճանաչման լրացուցիչ միջոց։

Այդպիսի դասակարգում կատարելիս Ա. Ղարիբյանը հիմք է ընդունում բարբառների պայմանական և պայմանական (դրանք նա միավորում է «պայմանական» ընդհանուր հասկացության մեջ) բաղաձայնների համակարգի առկա դրությունը։ Բարբառներին հատուկ բաղաձայնական այդպիսի համակարգերի յուրահատկություններն ու փոփոխությունները բնութագրելու համար նաև ալակետ է ընդունում գրաբարի բաղաձայնական եռաստիճան համակարգը (թ, պ, փ, դ, տ, թ, ձ, ծ, չ, շ, գ, կ, ք)։ Այդ համակարգի համեմատությամբ եղած տարրերությունները ներկայացվուած են որպիս տեղաշարժ և տեղաշարժ-տեղափոխություն։ Ըստ այդմ՝ մատնացույց նն արվում երկու տեղաշարժեր, մեկ տեղաշարժ-տեղափոխություն և ապա՝ անտեղաշարժություն։ Այդ-

պիսով գիտությանը ժամանակին հայտնի բարբառները  
բաժանվում են հետեւալ խմբերի՝ ա. բաղաձայնական  
համակարգի առաջին տեղաշարժի կամ երկաստիճան  
ձայնեղաղուրկ բարբառներ (Աստրախանի, Շամախու,  
Ղարաբաղի, Հաղըռութի, Շաղախի, Մարաղայի, Ուրմիա-  
յի, Խոյի, Վանի, Մոկսի), բ. բաղաձայնական համա-  
կարգի երկրորդ տեղաշարժի բարբառներ, որոնց մեջ  
մտնում են երկաստիճան խլաղուրկ (Պոլսի, Եղոկիայի.  
Նոր Նախիջևանի, Տրապիզոնի), եռաստիճան խլաղուրկ  
(Համշենի, Սյուրիայի, Ակնի, Արարկիրի, Հաճնի, Շա-  
պին-Գարահիսարի, Խարբերդ-Երզնկայի, Սուչավայի),  
բառաստիճան բաղաձայնակուն համակարգ ունեցող  
(Կարնո, Մշո, Երևանի, Նոր Ջուղայի) բարբառները,  
դ. տեղաշարժ-տեղափոխություն ունեցող բարբառների  
խումբ, որն իր մեջ ընդգրկում է երկաստիճան խլաղուրկ  
համակարգով (Տիգրանակերտի, Մալաթիայի, Ռոդոս-  
թոյի, Նիկոմիդիայի) և միջին հայերենի տիպի բաղա-  
ձայնական համակարգով (Կիլիկիայի) բարբառները,  
դ. բառասկզբում համապատասխան բաղաձայնները  
շիոփոխած (անտեղաշարժ, եռաստիճան) բարբառները  
(Թրիլիսիի, Մելրու, Կարճևանի, Արդվինի):

Ինչպես տեսնում ենք, բարբառների ծանոթ խմբա-  
վորումները մեծ շափով փոխվում են. քիչ շեն դեպքերը,  
երբ ձեւաբանական հիմունքով խմբավորված բարբառ-  
ներն իրենց խմբերից տեղափոխվում են ուրիշ խմբերի  
մեջ. հաճախ մի խմբի մեջ ներկայանում են ձեւաբանա-  
կան ուարեր ճյուղերի բարբառներ:

Այսուհետև հրատարակվեցին Ա. Ղարիբյանի բար-բառագիտության բուհական ձեռնարկները՝ «Համառո-տություն Հայ բարբառագիտության» (1941 թ.), «Հայ բարբառագիտություն» (1947 թ.), որոնք կարևոր դեր կատարեցին բարբառագիտության բարձրագույն դասըն-թացի ստեղծման գործում: Ապա նաև լույս տեսան այլ աշխատություններ՝ «Հայ բարբառների դասակարգման հարցի շուրջը» (1952 թ.), «Новооткрытый диалект армянского языка» (1953 թ.): Հեղինակի այդ բոլոր տարիների բարբառագիտական աշխատանքի հանրա-գումարը եղավ «Հայ բարբառագիտություն» ծավալուն գիրքը (1953 թ.), որտեղ, իհարկե, միաժամանակ ներ-կայացված են ընդհանրապես հայ բարբառագիտության ձեռք բերած հիմնական նվաճումները: Գրքի «Ներա-ծություն Հայ բարբառագիտության» բաժնում քննարկ-ված են մի շարք տեսական ու գործնական հարցեր, որոնք կարևոր են բարբառային որոշակի նյութի ուսում-նասիրության ու բարբառների բնութագրման տեսակե-տից: Այստեղ նախ համառոտ տեղեկություններ են տրվում հայ բարբառագիտության պատմությունից, ապա բերվում են բարբառագիտական մի շարք կանոն-ներ, որոնք ծառայում են իրեն բանալի՝ գրքում տրված բարբառային նյութի ձիշտ ընթերցման, բարբառներին յուրահատուկ հնչյունների մասին պատշաճ գաղափար կազմելու, ինչպես նաև նպաստում են բարբառագիտա-կան միասնական տառադարձության մշակման գործին:

Առանձին հատվածներով տրված են բարբառների ձևաբանական ու հնչյունական դասակարգումները։ Զգալապիս վերանայված է ձեաբանական դասակարգումը։ Բարբառուների մինչ այդ ընդունված չորս ճյուղերի մեջ, նոր նկարագրված բարբառների հաշվառումով, կատարված են համալրումներ, ընդունված են նոր ճյուղեր, ապանակ կատարված է այդ բոլոր ճյուղերի խմբավորում։ Ժամանակին գիտությանը հայտնի դարձված (մի մասը՝ հենց հեղինակի ջանքերով) 51 բարբառները ներկայացված են ութ ճյուղերով։ Այսպես, «ում» ճյուղ— թվով 7 բարբառ (Արարատյան, Ղարադաղի, Շամախու, Աստրախանի, Նոր Ճուղայի, Ագուլիսի, Թավրիզ-Մոզդոկի), «ու» ճյուղ— 8 բարբառ (Ղարադաղի, Դզմարի, Արդվինի, Մեղրու, Կարճևանի, Հադրութի, Քեյվան-Շաղախի, Ուրմիայի), ըստ որում նշվում է, որ այս ճյուղի գրեթե բոլոր հիմնական գծերը պահպանում է Ղարադաղի բարբառը՝ լինելով «մայր» բարբառ այդ ճյուղի համար, «և» ճյուղ— 2 բարբառ (Մարադայի, Խոյի), «կը» ճյուղ— 24 բարբառ (Կարսո, Մշո, Տիգրանակերտի, Խարբերդ-Երղնկայի, Օրդուի, Նիկոմիդիայի, Եղդովիայի, Շապին-Գարահիսարի, Մալաթիայի, Հաճնի, Ջմյուռնիայի, Պոլսի, Ռոդոսթոյի, Նոր Նախիջևանի, Վանի, Դիագինի, Ողմիի, Մոկսի, Տրապիզոնի, Համշենի, Մյուրիայի, Ակնի, Առափալի, Սեբաստիայի), «կա» ճյուղ— թվով 5 բարբառ (Ամասիայի, Ջեյթունի, Բելլանի, Սվեդիայի և Մարաշի), «հա» ճյուղ— 2 բարբառ (Քեսարի, Արաբկիրի), գրաբա-

բակերպ — 1 բարբառ (*Խոտրջուրի*), միջնյուղային — 2 բարբառ (*Արեշ-Հավարիքի* և *Թբիլիսիի*):

Սակայն այսպիսով հարցը չի վերջանում: Այս ճյուղերն այնուհետև համախմբվում են դերայավոր, մասնիկավոր և գրաբարատիպ խմբերի մեջ. դերբայավոր խմբի մեջ հաշվվում են «ում», «ս», «լ», մասնիկավորի մեջ՝ «կը», «կա», «հա» ճյուղերը, գրաբարատիպը մնում է մենակ: Բայց այս բաժանմամբ որևէ խմբի մեջ չեն զետեղվում միջնյուղային վերոհիշյալ երկու բարբառները:

Դասակարգման հարցերին հաջորդում են բարբառների գոյացման, պատմության ու տարածման հարցեր՝ կապված ժողովրդի պատմության հետ: Շոշափվում են բարբառի ու ենթաբարբառի սահմանադման խնդիրները. համապատասխան հատկանիշների հիման վրա առաջարկվում է մի քանի ենթաբարբառ համարվածները հանաշել որպես ինքնուրույն բարբառներ:

Մի ամբողջ բաժին է հատկացված հայերեն բարբառների համեմատական ուսումնասիրությանը (էջ 107—214): Այստեղ նկատի են առնված հնչյունաբանությունն ու ձևաբանությունը: Համեմատական քննության են ենթարկվում ձայնավոր ու բաղաձայն հնչյունները, հոլովման ու խոնարհման համակարգերը:

Վերջին բաժինը, որ ամբողջ գրքի կեսից ավելին է (էջ 215—457), նվիրված է առանձին ճյուղերի քննութագրմանը: Ցուրաքանչյուր ճյուղի ընդհանուր քննութագրությունից հետո նկարագրվում են այդ ճյուղին պատ-

կանող առավել բնորոշ բարբառներ (հեղինակի ընտրությամբ), բերվում են բարբառային նմուշներ և այլն:

1958 թվականին լուս տեսած «Հայերենի նորահայտ բարբառների մի նոր խումբ» գրքում հեղինակը ամփոփ կերպով քննում ու բնորոշում է երեք բարբառ՝ Արամոյի, Քարուահեի և Եղեսիայի:

Դեռ 1953 թվականին Ա. Ղարիբյանն այն միտքն է հայտնում, որ հայերենի որոշ բարբառների մեջ հանդես եկող շնչեղ ձայնեղ բաղաձայնները կապված են հնդեվրոպական հիմք լեզվի նման բաղաձայնների հետ։ Այսպիսով նա փաստորեն վերանայում էր իր իսկ կատարած հնչյունական դասակարգման որոշ դրույթներ։ Հետագայում հրատարակած մի քանի հոդվածներում նա որոշակիորեն առաջ քաշեց այն տեսակետը, թե շնչեղ ձայննեղների առկայությունը, որ առաջ է բերում պայթական ու պայթա-շփական բաղաձայնների քառասուիճան համակարգ, ոչ թե տեղաշարժի արդյունք է, այլ այդպես ժառանգված է հիմք լեզվից, ուստի բաղաձայնական համակարգի այդպիսի վիճակը, ըստ հեղինակի, ավելի հին է, քան գրաբարյանը։

Այդ հարցադրումը շատ մտքեր շարժեց։ Բանավեճ սկսվեց «Պատմա-բանասիրական հանդես»-ի էջերում, որը շուտով տեղափոխվեց «Вопросы языкоznания» միութենական գիտական պարբերականը (1959—1961 թթ.): Այդ բանավեճին մասնակցեցին թե՛ սովետական և թե՛ արտասահմանյան գիտնականներ։ Եղան թեր և դեմ կարծիքներ։ Դա առիթ ծառայեց բարձրացնե-

լու և վերաբժարծելու պատմահամեմատական հնչյունաբանության հետ կապված որոշ հարցեր: Պետք է նշել, որ հայերենի հետ առնչվող այդ բնույթի բանավեճը անհախընթաց էր և շատ օգտակար գիտության համար:

Հայոց լեզվի պատմությանն ու պատմական քերականությանն են նվիրված մի շարք աշխատություններ: Ա. Ղարիբյանն այս բնագավառը թևակոխել է ուսանողների համար կազմված առաջադրություններով և հայոց լեզվի հոգնակիակերտ ձևույթների ուսումնասիրությամբ: 1935 թվականին լույս տեսավ «Հայերենի հոգնակի նշանակող մասնիկները և նրանց լեզվաբանական արժեքը» աշխատությունը, որտեղ հեղինակը ի մի է բերել ու քննել գրաբարի, միջին հայերենի, բարբառների և աշխարհաբարի համապատասխան ձևույթները՝ հանգամանորեն կանգ առնելով գրանց կատարած դերի և կրած պատմական փոփոխությունների վրա: Հեղինակը կանգնած է եղել այն տեսակետի վրա, թե թվով բավականաշափ շատ այդ մասնիկները գալիս են հայերենի կազմի մեջ մտած երբեմնի ցեղային ու այլ լեզուներից (սեփական նյութն էլ կարող էր բազմազան լինել):

Դրան հաջորդեցին հայոց լեզվի պատմությանը վերաբերող գրքեր՝ «Հայոց լեզվի պատմության ներածություն» (1935 թ.), «Հայոց լեզվի պատմության ուսումնասիրության ներածություն» (1937 թ.), որոնց նպատակն էր ուրվագծորեն ներկայացնել հայոց լեզվի պատմությունը սկզբից մինչև հիշյալ ժամանակաշրջանը,

որոշել գրաբարի լեզվաբանական տիպոլոգիական բնույթը (Ներքին և արտաքին թեքում), բարբառների և աշխարհաբարի կցականությունը և այլն։ Իր որոշ դրույթները ձևակերպելիս հեղինակը ելնում էր այդ ժամանակ մեղանում լեզվաբանության մեջ իշխող դիրք դրաված ն. Յա. Մառի «Լեզվի նոր ուսմունք»-ից։

Այս բնագավառին են վերաբերում նաև հետագայում տպագրված այլ աշխատություններ. գրանցից են՝ «Ժողովրդական լեզվի մի հնագույն վկայության մասին» (1940 թ.), „Կ периодизации истории армянского литературного языка“ (1948 թ.), „О системе армянского языка II века до нашей эры“ (1952 թ.), „Հայերենի անդանական հոլովման զարգացման երկու ներքին օրենքները“ (1955 թ.), „Об образовании армянского национального литературного языка“ (1957 թ.):

Ա. Ղարիբյանը հոդվածներ է գրել նաև գրական լեզվի մշակման ու զարգացման գործում խոշոր գրողների ու գործիչների կատարած դերի վերաբերյալ։ Հիշենք այդ բնույթի հետեւյալ հոդվածները՝ «Մ. Նալբանդյանի լեզվաբանական և լեզվամշակման հայացքները» (1954 թ.), «Խաչատրու Աբովյանի տեղը հայ գրական լեզվի պատմության մեջ» (1957 թ.):

Ա. Ղարիբյանը զբաղվել է նաև ընդհանուր ու պատմահամատական լեզվաբանության հարցերով և հանդիս է եկել ոչ քիչ հոդվածներով, ինչպես՝ Նիկողայոս Մառը և նրա «Լեզվի նոր ուսմունքը» (1939 թ.),

«Из сравнительной фонетики армянского и славянских языков» (1955 г.), «Индоевропейский консонантизм в отражении армянских диалектов» (1956 г.), «Հայոց լեզվի դերն ու տեղը հնդեվրոպական լեզուների համակարգում» (1960 г.) и т. д.

Զգալի է Ա. Ղարիբյանի ավանդը բառարանագրության ասպարեզում։ Այստեղ նա հանդես է եկել ոչ միայն նախաձեռնողի ու կազմակերպչի, այլև հեղինակի, հեղինակակցի և խմբագրի դերով։ Նրա հեղինակակցությամբ ու խմբագրությամբ կազմվել և հրատարակվել են ոռուս-հայերեն և հայ-ոռուսերեն բառարաններ։ «Ռուս-հայերեն բառարանը», որ լույս է տեսել 1945 թ., պարունակում է շուրջ 28.000 բառ, «Հայ-ոռուսերեն բառարանը՝ նույն քանակի բառերի ընդգրկումով», լույս է տեսել 1947 թ. (հեղինակակիցներ՝ Ե. Տեր-Մինասյան, Մ. Գևորգյան), վերջինս լրացվել, ընդարձակվել ու վերահրատարակվել է 1960 թվականին, պարունակում է նախորդից շատ ավելի բառաքանակ (40.000)։

Հայրենական պատերազմի ժամանակ հայ մարտիկներին օգնելու նպատակով հրատարակվեց (1941 թ.) «Ռուս-հայերեն ուազմական համառոտ բառարանը», հիսնական թվականներին իրականացվեց ոռուս-հայերեն քառահատոր մեծ բառարանի հրատարակումը, որի 3-րդ և 4-րդ հատորների գլխավոր խմբագիրն էր Ա. Ղարիբյանը։ Նա գլխավոր խմբագիրն է նաև ժամանակակից

Հայերենի բացատրական բառարանի առաջին հատորի:

Գրադիտության ուսուցման մեջ կարևոր է դպրոցական ուղղագրական բառարանի դերը, որպիսին կազմել է Ա. Ղարիբյանը. դա, սկսած 1940 թվականից, լրացումներով ու բարեփոխումներով վերահրատարակվել է մի քանի անգամ (հետագայում՝ հեղինակակիցներով):

Բառարանագրության բնագավառում Ա. Ղարիբյանի խոշոր ներդրումներից է «Ռուս-Հայերեն բառարանը» (մեկ ընդարձակ հատորով, 1968 թ.). Դա հեղինակի մեկուկես տասնամյակի ընթացքում կատարած աշխատանքի արդյունքն է. պարունակում է մոտ 85.000 բառահոդված և 100.000 բառ ու դարձվածք: Ռուսերենի բառացանկն ընտրված ու ճշգրտված է հատկապես վերջին տասնամյակներում հրատարակված հարուստ բառարանների ընդգրկած բառամթերքի հիման վա:

Խիստ մեծ է Ա. Ղարիբյանի վաստակը դպրոցական դասագրքերի ու մեթոդական ձեռնարկների ստեղծման բնագավառում: Դպրոցին, աշակերտին և ուսուցիչն օգնելու շափաղանց կարևոր գործին Ա. Ղարիբյանը շատ լայն տեղ է հատկացրել իր ողջ գործունեության ընթացքում: Նրա գրած դասագրքերի մեջ կենտրոնական տեղ է դրավում միջնակարգ դպրոցի 5—6-րդ դասարանների հայոց լեզվի քերականության դասադիրքը, որը առաջին անգամ լույս տեսավ 1934 թվականին: Դպրոցի համար կայուն դասագրքեր ստեղծելու ճանապարհին արված սկզբնական քայլերից էր դա: Մայրենի լեզվի դպրոցական դասընթացից այս գիրքն ընդգրկում էր հնչունաբա-

նությունը, բառակազմությունը, ուղղագրությունը և ձեաբանությունը: Իրեն նախագիտելիք և հիմնական նյութի ուսուցման հիմք ներկայացվում էր նաև պարզ նախադասությունը՝ գլխավոր անդամներով և լրացումներով: Տեսական նյութը և վարժությունները տրված էին անջատ (էջ 3—101 և 102—120): Հետագայում հրատարակվեց քերականական և ուղղագրական վարժությունների առանձին դասագիրք (1938 թ.), որը վերահրատարակվեց (1939 թ.), բայց ի վերջո նպատակահարմար համարվեց վարժությունները միահյուսել տեսական մասի հետ և համապատասխանորեն տալ բացատրություններից ու կանոններից հետո, և այդպես շարունակեցին լույս տեսնել մյուս հրատարակությունները: Այս դասագիրքը ժամանակի ընթացքում շարունակ փոփոխությունների ենթարկվեց, լրացվեց ու բարեփոխվեց. 30 տարում ունեցավ 25 վերահրատարակություն: Պետք է խոստովանել, որ այս դասագիրքը նշանակալից դեր կատարեց մեր դպրոցի կյանքում: Շատ սերունդներ նրանով մայրենի լեզու սովորեցին:

Ա. Հարիբյանը հայոց լեզվի մի շարք դասագրքեր է գրել հայկական դպրոցի տարրական դասարանների, ինչպես նաև ոչ հայկական դպրոցների այլևայլ դասարանների համար: Այսպես. «Հայոց լեզու Քերականություն և ուղղագրություն»: Դասագիրք 2-րդ դասարանի համար», «Հայոց լեզու Քերականություն և ուղղագրություն»: Դասագիրք 3-րդ դասարանի համար» (Ա. Դ. Դա-

դարյանի հեղինակակցությամբ): Սրանք բազմիցս վերահրատարակվել են: «Հայոց լեզվի դասագիրք: Քերականություն և ուղղագրություն»: ՀՍՍՌ ոչ հայկական դպրոցների 5—7-րդ դասարանների համար», «Հայոց լեզվի քերականության դասագիրք: ՀՍՍՌ ոչ հայկական դպրոցների 8—10-րդ դասարանների համար» և այլն: Սրանք ևս մի շարք վերահրատարակություններ են ունեցել:

Բացի սրանցից, Ա. Ղարիբյանի գրչին են պատկանում հայոց լեզվի այլ ձեռնարկներ: 1957 թվականին (Գ. Պարիսի հեղինակակցությամբ) լույս տեսավ «Հայոց լեզվի քերականության, ուղղագրության և կետադրության ուղեցուցը», որը գերազանցապես տեղեկատու բնույթ ունի. դա մի օժանդակ ձեռնարկ է հայոց լեզուն ուսումնասիրելու, նրա քերականական, ուղղագրական և կետադրական օրենքներով ու կանոններով առաջնորդվելու համար:

Թե՞ կազմությամբ ու բռվանդակությամբ և թե՞ նպատակով արժեքավոր ու հետաքրքրական ձեռնարկ է ուսուերեն լեզվով շարադրված հայոց լեզվի ինքնուսուց՝ „Краткий курс армянского языка. Пособие для самостоятельного изучения“, որի 4-րդ հրատարակությունը (Զ. Ղարիբյանի հեղինակակցությամբ) լույս տեսավ 1970 թվականին: Ձեռնարկը նախատեսված է բոլոր նրանց համար, որոնք ուսաներեն գիտեն և կամենում են սովորել հայոց լեզուն: Գիրքն այդ հնարավորությունը տալիս է. առավելապես գործնական բնույթ

ունի և ուսումնասիրողին հրամցնում է ժամանակակից գրական հայերենի ամենից բնորոշ առանձնահատկությունները։ Ներածական մասում համառոտ ծանոթություն է տրվում հայոց լեզվի բնույթի, անցյալի ու ներկայի մասին, որն անհրաժեշտ է ուսումնասիրողին տվյալ լեզվի տեղի ու դերի վերաբերյալ իրազեկ պահելու առումով։ Դրան հետեւում է գործնական ուսուցման մասը։ Առանձին մասերով ներկայացված են արտասանությունն ու գրությունը, բառակազմությունը, ձևաբանությունը, շարահյուսությունը։ Դրանք օժտված են գործնական բազմաթիվ վարժություններով, բառարանիկներով, զրուցարանային հոդվածներով։ Տրված են քերականական տերմինների հայ-ռուսերեն և ռուս-հայերեն բառարանիկներ։ Այս բոլոր գեպագերում քիչ դըմվարություններ չեն հաղթահարվել, որովհետև միշտ անհրաժեշտ է եղել հայերենին բնորոշ երևույթները բացատրել այնպես, որ ռուսերեն իմացողը հայերենը սովորի ոչ թե պատճենումով, այլ բնական դրությամբ։ Գրքին կցված է բավականաշափ ընդարձակ հայ-ռուսերեն բառարան, որը պարունակում է գլխավորապես ընդհանուր և հաճախակի գործածություն ունեցող շուրջ 10.000 բառ։ Այս բառարանին նախըրդում է մի բացատըրագիր, որտեղ բերվում են մի շարք կարևոր կանոններ, որոնց հիման վրա ուսումնասիրողը իր ձեռքի տակ եղած բառերից կարող է կազմել ուրիշ բառեր։

Ա. Ղարիբյանը վաստակ ունի նաև ռուսաց լեզվի

ուսուցման մեջ։ Բացի այն աշխատանքից, որ նա տարել  
է համապատասխան բառարանների ստեղծման ուղղու-  
թյամբ, զբաղվել է նաև հայկական դպրոցների համար  
ուսուաց լեզվի դասագրքեր կազմելու կարևոր գործով։  
Ակադ 1939 թվականից՝ լույս են տեսել այլ հեղինակ-  
ների (Ռ. Մելքոնյանի և Մ. Կարաքեշիշյանի) հեղինա-  
կակցությամբ նրա կազմած դասագրքերը։ Դրանցից են՝  
«Грамматика русского языка. Учебник для 8—9  
классов армянских школ», «Русский язык. Учебник  
для 10-го класса армянских школ. Синтаксис»  
և այլն, որոնք նույնպես բազմիցս վերահրատարակվել  
են։ Այդ դասագրքերը քիչ քեր չեն կատարել հայկական  
դպրոցներում ուսուաց լեզվի ուսուցման պատշաճ դր-  
վածք ապահովելու խնդրում։

Ա. Ղարիբյանի գիտական գործունեության մեջ զու-  
գահնու մասնագիտություն է եղել հայոց լեզվի դասա-  
վանդման մեթոդիկան, որով նա զբաղվել է մոտավորա-  
պես երեք տասնամյակ։ Այս բնագավառին նվիրված են  
շատ հոգվածներ և մի քանի գրքեր։

1938 թվականին լույս տեսավ «Հայոց լեզվի մեթո-  
դիկան»՝ որպես ուսումնական ձեռնարկ բարձրագույն  
դպրոցների ուսանողության և ուսուցչության համար։  
Դա հիմնականում ընդգրկում էր հայոց լեզվի քերա-  
կանության և ուղղագրության մեթոդիկայի հարցերը։  
Դիրքը բաղկացած է երեք բաժիններից։ Դրանք են՝ «Քե-  
րականության ուսուցումը տարրական դպրոցում» (էջ  
19—78), «Հայոց լեզվի ուղղագրության հիմունքները և

ուսուցման մեթոդները» (էջ 81—131), «Քերականության ուսուցումը 5—7-րդ դասարաններում» (էջ 135—243): Վերջում բերված են հայոց լեզվի քերականության սխեմաներ, որոնք վերաբերում են այդ տարիներին դպրոցներում ընդունված քերականական համակարգերին, ինչպես նաև աշխարհաբարի քերականության պատմությանը:

Տարրական դպրոցի բաժինն սկսվում է նախադասության ուսուցումից: Ապա հեղինակը կանգ է առնում ժամանակին ծրագրով նախատեսված ձևաբանական դրոշ հասկացությունների (ըստ տարրեր դասարանների), ինչպես նաև բառակազմության դասավանդման մեթոդիկայի վրա: Հաջորդ բաժնում տրվում է հայոց լեզվի ուղղագրության հիմունքների ընդհանուր պատկերը, ապա նշվում են ուսուցման ձևերն ու միջոցները: Խոսվում է տարրեր տեսակի սխալների ու նրանց վերացման ուղիների մասին: Որոշ տեղ է հատկացվում գրավորների տիպերին և սխալների սրբագրման ձևերին: Վերջին բաժնում, ըստ 5-րդ, 6-րդ, 7-րդ դասարաններում բաշխված ծրագրային նյութի, խոսվում է քերականության դասավանդման առանձնահատկությունների մասին: Վերջում տրվում է նախադասության վերլուծության նմուշ:

Այդ գիրքը, լինելով հեղինակի մեթոդական բնույթի առաջին ծավալուն աշխատությունը, զերծ չէր թերություններից և, անշուշտ, դրույթների ճշտման, ինչպես նաև լրացման ու այլ փոփոխությունների կարիք էր

դգում: Հեղիակն այդ նկատառումներով հետագա տարիներին որոշ աշխատանք տարել է:

1940 թվականին լույս տեսավ «Մայրենի լեզվի մեթոդիկան», որի մի հիմնական բաժինը նվիրված էր դրամանաշության, կարդալու ուսուցման, գրավոր ու բանավոր խոսքի զարգացման մեթոդիկային (էջ 5—160), իսկ մնացած մասն ընդգրկում էր ուղղագրության և թիրականության ուսուցման մեթոդիկայի հարցերը (էջ 161—232):

1947 թվականին տպագրված «Հայոց լեզվի մեթոդիկա» մեծածավալ գիրքը իր մեջ ընդգրկում է նախորդ երկուսի պարունակած նյութը, սակայն շատ կողմերով տարրերվում է նրանցից. կատարված են շատ փոփոխություններ. որոշ դրույթներ վերանայված են, խորացված, արված են բազմաթիվ լրացումներ, ավելացված են մի շարք նոր հատվածներ, կատարված են ծրագրային նյութի որոշ վերաբաշխումներ, առաջ են քաշված մեթոդական զանազան առաջարկներ և այլն:

Ուշագրավ է Ա. Ղարիբյանի «Հայոց լեզվի դասավանդման մեթոդիկա» աշխատությունը (1954 թ.), որը այս բնագավառում հեղինակի կատարած աշխատանքի ամրողացումն ու խորացումն է: Այստեղ ամենից առաջ կարևոր են համարվել լեզվի դասավանդման մեթոդիկայի ընդհանուր հարցերը: Դրանց մեջ էական տեղ է գրավում ուսուցողական աշխատանքի պլանավորման խնդիրը. սրա մեջ էլ նկատի է առնված ծրագրային նյութի քառորդային պլանավորումը, ինչպես նաև դասի

պլանավորումը: Բնութագրված են լեզվի դասերի տարրերը տիպերը (նոր նյութի հաղորդման, ամփոփման, յուրացված գիտելիքների ամրապնդման, կրկնողության, հարցման և ստուգման, համակցված): Մրված են այդպիսիների պլանավորման կողմնորոշիչ օրինակներ: Տեղ է հատկացված ուսուցչի կենդանի խոսքի, զրուցի դերին և այլն: Գրքի մեծ մասը վերաբերում է Հնչյունաբանության, ուղղագրության, բառակազմության և քերականության ուսուցման մեթոդիկային (էջ 78—420), Այստեղ էլ, որպես կանոն, նախ բացատրվում են լեզվի կառուցվածքային համապատասխան իրողությունները և ապա ցույց են տրվում դրանց ուսուցման մեթոդները: Գրավոր և բանավոր խոսքին հատկացված բաժնում ուշադրության է արժանացված նաև ժամանակակից գրական հայերենի ուղղախոսությունը, նշված են բարբառայնության դեմ պայքարելու միջոցները: Հեղինակը ելնելով այդ տարիների ուսումնական պլանից (ուր հայոց լեզվի ժամեր են տրվում նաև բարձր դասարաններում), մի առանձին հատվածով կանգ է առել 8—10-րդ դասարաններում մայրենի լեզուն դասավանդելու մեթոդիկայի առանձնահատուկ կողմերի վրա (էջ 510—536): Զի մոռացված առարկայական հանձնաժողովի աշխատանքը: Այստեղ ևս բերված են քերականական սխեմաներ: Սա ևս ժառայիկ է որպես ձեռնարկ ուսուցիչների և ուսանողների համար:

Ինչպես տեսնում ենք, բեղմնավոր է եղել Ա. Ղարիբյանի գրիչը, խոշոր՝ գրավոր վաստակը: Խոսելով

այդ մասին, սակայն, չի կարելի ասել, թե նրա աշխատություններն անթերի են, զերծ սխալներից։ Այնտեղ կան և սխալներ ու թերություններ, դիտովթյան այսօրվա դիրքերից անընդունելի դրույթներ, որոնց մասին ժամանակին արտահայտվել են և՛ ուրիշներ, և երբեմն էլ ինքը՝ հեղինակը։

Այժմ արդեն Ա. Ղարիբյանը հասել է պատկառելի տարիքի։ Սակայն տարիները շեն նվազեցրել նրա ուժն ու եռանդը։ Նա շարունակում է աշխատել իրեն հատուկ թափով ու ոգմորությամբ, և կասկած շկա, որ առաջիկայում հանդես կգա նորանոր գործերով։

ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

1932

Ներածություն հայոց լեզվի պատմության: Առաջադրություն  
1—7: [Ե., 1932—1933]:

Առաջադրություն 1—3: 100 էջ: (ՀՍԽՀ հեռակա ինդուստրիալ-  
ագրարային մանկավարժ. ին-տ):

Առաջադրություն 4—7: 143 էջ: (ՀՍԽՀ հեռակա մանկավարժ.  
ին-տ):

Բուսաց լեզու: (Ա. Վարիանտ): Առաջադրություն 1 և 2: [Ե., 1932]:  
25 էջ: (ՀՍԽՀ ինդուստրիալ-ագրարային մանկավարժ. ին-տ):

Պրոֆ. Արմեյանի լեզվաբանական «Տեսությունների» մասին:—  
Տեղեկադիր (Մարքսիզմ-լենինիզմի ին-տ), 1932, № 1, էջ 154—163:

1933

Ներածություն հայոց լեզվի պատմության: Առաջադրություն  
1—7: :

1934

Հայոց լեզվի քերականություն: Զեսարանություն: Դասագիրք միշ-  
նակարգ դպրոցների համար: Հինգերորդ դասարան: Ե., Հայպետ-  
հրատ, 1934: 124 էջ:

---

1 Տե՛ս 1932 թ.:

Հայոց լեզվի մեթոդիկայի ուրվագիծ: Ե., 1935: 83 էջ: (ՀՍԽՀ ժանկավարժ. ին-տի հեռակա սեկտոր): Զեռադրի իրավունքով: Ապահովագրություն:

Հայոց լեզվի պատմության ներածություն: Ե., Պետհրատ, 1935: 239 էջ: (ՀՍԽՀ հեռակա մանկավարժ. ին-տ):

Հայոց լեզվի ուղղագրության հիմունքները և ուսուցման մեթոդները: Ե., Պետհրատ, 1935: 55 էջ: (Մանկավարժ. և մանկաբան. դիտահետազոտ. ին-տ):

Հայոց լեզվի թերականության դասադիրք: Հնչյունաբանություն: Թարագիտություն: Զեարանություն: 5-րդ և 6-րդ դասարանների համար: Ե., Պետհրատ, 1935: 190 էջ:

Նույնը 2-րդ վերամշակված հրատ.: 1937. 139 էջ:

Նույնը 3-րդ հրատ.: 1938. 139 էջ:

Նույնը 4-րդ հրատ.: 1939. 262 էջ:

Նույնը 5-րդ վերամշակված հրատ.: 1941: 297 էջ:

Նույնը 6-րդ հրատ.: 1945. 294 էջ:

Նույնը 7-րդ հրատ.: 1949. 317 էջ:

Նույնը 8-րդ հրատ.: 1950. 318 էջ:

Հայերենի հոգնակի նշանակող մասնիկները և նրանց լեզվաբանական արժեքը— Աշխատություններ (ՀԽՍՀ Գուշտուրայի պատմության ին-տ), հ. 1, 1935, էջ 85—104:

## 1936

Հայոց լեզվի թերականության սխնմաներ: Մեթոդական օժանդակություն հայոց լեզվի դասաւումներին: Ե., Պետհրատ, 1936. [14 էջ]: (ՀԽՍՀ լուսաժողովատ):

Դրաճանաշության ուսուցումը կոմքինացիոն մեթոդով: (Նյութեր ուսուցչական խորհրդակցությանների համար):— Խորհրդ. դպրոց, 1936, 27 օգոստ: :

